«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 9
21.03.2025թ.

1. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի կազմակերպման հարցի վերաբերյալ.

Հաստատել գիտական խոհրդի նիստի ընթացքում կազմակերպված փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները.

➢ Հիմք ընդունելով ՀՀ ԲԿԳԿ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները և հաշվի առնելով ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները («կողմ»՝ 55, «դեմ»՝ 0, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 1), Մկրտիչ Շուրայի Մկրտչյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ե.23.06 - «Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ:

➢ Հիմք ընդունելով ՀՀ ԲԿԳԿ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները և հաշվի առնելով ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները («կողմ»՝ 56, «դեմ»՝ 0, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 0), Մետաքսյա Հովնանի Ավետիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ա.01.00 - «Մաթեմատիկա» մասնագիտությամբ:

➢ Հիմք ընդունելով ՀՀ ԲԿԳԿ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները և հաշվի առնելով ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները («կողմ»՝ 54, «դեմ»՝ 1, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 1), Կարինե Պետրոսի Մնացականյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

2. ՀԱԱՀ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել ՀԱԱՀ 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակառուներին՝ ըստ ֆակուլտետների (որոշումն ընդունվեց միաձայն).

▪ Ագրոնոմիական ֆակուլտետ, ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի անվան կրթաթոշակ. «Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողներ Մամաջանյան Ժորա Սասունի (միավորը՝ 12.7) և Կրտիկաշյան Մարիա Գևորգի (միավորը՝ 12.6),

▪ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ, տնտեսագետ Վահան Տոտոմյանցի (Թոթոմյանց) անվան կրթաթոշակ. «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողներ Ոսկանյան Էլեն Վաչիկի (միավորը՝ 41.8) և Աճեմյան Մայրանուշ Կարենի (միավորը՝ 13.25),

▪ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ, ակադեմիկոս Սերգեյ Մովսեսյանի անվան կրթաթոշակ. «Անասնաբուժություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողներ Արսենյան Երվանդ Սամվելի (միավորը՝ 21.9) և Ռսյան Անդրանիկ Միհրի (միավորը՝ 35.9),

➢ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ, գյուտարար Ասատուր Սարաֆյանի (Օսկար Բենկեր) անվան կրթաթոշակ. «Ճշգրիտ գյուղատնտեսություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտներ Մանուկյան Ռուբինա Հայկի (միավորը՝ 58.8) և Գրիգորյան Լյովա Նորայրի (միավորը՝ 43.2)::

3. ՀԱԱՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու նպատակով փորձագետների խումբ ձևավորելու հարցի վերաբերյալ.

3.1, Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի նախագահ Էրիկ Վոյեին և նույն համալսարանի միջազգային որակավորման բարձրացման բաժնի ղեկավար Արամ Արիստակեսյանին ՀԱԱՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու նպատակով ձևավորել փորձագետների խումբ հետևյալ կազմով.

- Մարիամ Մովսիսյան՝ Միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր,
- Հասմիկ Հովհաննիսյան՝ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
- Լուսինե Մնացականյան՝ աշխատակազմի ղեկավար,
- Աննա Դաշտոյան՝ ՈԳԱԿ տնօրեն,
- Գարեգին Համբարձումյան՝ Միջազգային կապերի դեպարտամենտի պետ,
- Անի Պետրոսյան՝ Ագրարային մենեջմենթ միջազգային մագիստրոսական ծրագրի համակարգող:

3.2. Հանձնարարել փորձագետների խմբի ղեկավար Մ. Մովսիսյանին կազմակերպել քննարկում, ուսումնասիրել առաջադրված թեկնածուների գործունեության համապատասխանությունը ՀԱԱՀ պատվավոր պրոֆեսորի կոչման համար կանոնակարգով սահմանված չափանիշներին և մինչև ս.թ. մարտի 28-ը ներկայացնել եզրակացություն:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ